/

Համագործակցության համաձայնագիր

Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության մասին

«02» հունվարի 2011 թ. ք. Երևան

Սույն համաձայնագիրը կնքվում է Գյումրու համայնքի մտավորականության ներկայացուցիչներից կազմված համակարգող խմբի (այսուհետ՝ Համակարգող խումբ) և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջև (այսուհետ՝ Կողմեր)՝ Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության նպատակով:

1. ***Սույն հուշագրի նպատակն է.***

1) Գյումրի քաղաքում պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանման ու վերականգնման նպատակով իրականացվող գործընթացներում ներգրավել նաև Գյումրի քաղաքի մտավորականության և արվեստասեր հասարակության ներկայացուցիչներին,

2) ապահովել Գյումրի քաղաքում պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանմանն ու վերականգնմանն ուղղված գործընթացների թափանցիկություն, հանրությանը մատչելի տեղեկույթի տրամադրում իրականացվող աշխատանքների հանգուցային, անհրաժեշտության դեպքում նաև ընթացիկ հատվածների վերաբերյալ:

2. ***Կողմերը պայմանավորվում են հետևյալի շուրջ.***

1) Գյումրի քաղաքում պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանման ու վերականգնման հետագա աշխատանքների համակարգման նպատակով ստեղծել 6 անդամից կազմված հանրային հանձնախումբ, որից 4 անդամ՝ Գյումրու մտավորականության և 2 անդամ՝ ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչներ,

2) յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կազմակերպել միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի քննարկում-

shirakcentre.org

ներ: Անհրաժեշտության դեպքում քննարկումներին կարող են հրավիրվել նաև ՀՀ Շիրակի մարզպետարանի և Գյումրու քաղաքապետարանի ներկայացուցիչներ:

3) ապահովել Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների անվտանգ պահպանության նպատակով անհրաժեշտ փորձագիտական, մասնագիտական ու իրավաբանական ներուժի ներկայությունը և հանրային հանձնախմբին մասնագիտական եզրակացությունների հասանելիությունը,

4) յուրաքանչյուր տարի երկու անգամ հրապարակել Գյումրի քաղաքում պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության ուղղությամբ հանրային հանձնախմբի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկույթ,

5) անհրաժեշտության դեպքում համագործակցության նպատակները կարող են վերանայվել:

3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, այն կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Կողմերը չեն կրում որևէ ֆինանսական պարտավորություն:

4. Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) թերթից, կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրամադրվում է համաձայնագրի 1 (մեկ) օրինակ:

5. Սույն համաձայնագրում լրացումները և փոփոխությունները կարող են կատարվել միայն Կողմերի համաձայնությամբ:

Համաձայնագրի Կողմեր՝

ՀՀ մշակույթի նախարար՝

Հասմիկ Պողոսյան

.....

Գյումրու մտավորականության ներկայացուցիչներ՝

Հասմիկ Մելքոնյան՝ լրագրող .....

Գարիկ Մանուկյան՝ գեղանկարիչ .....

Արթուր Գևորգյան՝ քանդակագործ .....

shirakcentre.org